

ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱԼԵԶՈՒ
ԼՍԱՐԱՆՈՒՄ

ABSTRACT

SOME PECULIARITIES OF TEACHING SPANISH VOCABULARY TO
ARMENIAN STUDENTS

The present article is devoted to the study of methods of teaching the Spanish vocabulary to Armenian students. The article discusses modern teaching methods that contribute to the rapid enrichment and dynamic improvement of vocabulary. Actually the number of Armenian students that study Spanish has increased and very often it is necessary to improve the vocabulary and communication skills according to demands and profession. The article examines all the points that play a major role in teaching the Spanish vocabulary, as well as suggests an effective methodology based on a student-centered approach.

Key Words: Spanish teaching, vocabulary, communication, Armenian students, methodology, communication skills, communicative method, effective teaching, interactive learning, semantic meaning, visual memory.

* e-mail: lilitsaroyan1975@gmail.com



This work is licensed under a Creative Commons
Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 10/06/2024

Revised: 17/06/2024

Accepted: 19/06/2024

© The Author(s) 2024

РЕЗЮМЕ

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ИСПАНСКОЙ ЛЕКСИКИ АРМЯНСКИМ СТУДЕНТАМ

В данной статье рассматриваются современные методы обучения и средства, направленные на быстрое обогащение и динамичное развитие словарного запаса. Актуальность статьи обусловлена тем, что в настоящее время количество студентов, изучающих испанский язык, растёт, а также очень часто возникает необходимость быстрого развития словарного запаса и коммуникативных навыков в соответствии с требованиями, возникающими в профессиональной сфере, что зачастую является непростой задачей. В статье предлагается эффективная методика, основанная на личностно-ориентированном подходе.

Ключевые слова: преподавание испанского языка, развитие словарного запаса, современные методы, лексика, коммуникации, студентоцентричная аудитория, коммуникативный метод, метод коллаж, визуальная память, новые подходы, коммуникативные навыки.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայիս հոդվածը նվիրված է լեզվական հաղորդակցման առանցքային հմտություններից մեկին՝ իսպաներենի բառապաշարի դասավանդմանը: Հոդվածում քննվում են դասավանդման այն ժամանակակից մեթոդներն ու արդի միջոցները, որոնք միտված են բառապաշարի արագ հարստացմանն ու դինամիկ զարգացմանը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ ներկայումս մեծացել է իսպաներեն ուսումնասիրողների քանակը, ու, շատ հաճախ, հարկ է լինում՝ ըստ պահանջի ու մասնագիտության, արագ զարգացնել բառապաշար ու հաղորդակցական հմտություններ, ինչը շատ հաճախ դյուրին չէ: Հոդվածում քննվում են այն հիմնական դրույթները, որոնք մեծ դեր են կատարում բառապաշարի հարստացման հարցում, ինչպես նաև, առաջարկվում է, ուսանողակենտրոն մոտեցման վրա հիմնված, համապատասխան արդյունավետ մեթոդաբանություն:

Բանալի բառեր՝ իսպաներենի դասավանդում, բառապաշար, հաղորդակցում, հայալեզու լսարան, հայկական ու իսպանական մշակույթներ, մեթոդաբանություն, հաղորդակցական մեթոդ, գործնական կիրառում, կոլաժի մեթոդը, արդյունավետ դասավանդում, իմաստային նշանակություն, տեսողական հիշողություն, հաղորդակցական հմտություններ, ինտերակտիվ ուսուցում:

Իսպաներենի դասավանդման գործընթացում կարևոր ու առանցքային նշանակություն ունի բառապաշարի մատուցման գրագետ մոտեցումն ու մեթոդաբանության ռազմավարությունը, քանի որ իսպաներենով սահուն հաղորդակցվելու համար էական դերակատարում ունի հարուստ բառապաշարի իմացությունը:

Բառապաշարի դասավանդման ավանդական մոտեցումը ենթադրում է առաջին հերթին բառարանով ուսուցման մեթոդ ու դրանով աշխատելու կարողության զարգացում: Մակայն, ինչպես հայտնի է, լեզուն որպես հաղորդակցման միջոց, կենդանի օրգանիզմ է ու մշտապես գտնվում է զարգացման մեջ: Ժամանակի ընթացքում շատ բառեր դուրս են գալիս գործածությունից՝ իրենց տեղը զիջելով առավել ժամանակակից բառապաշարի, ինչը շատ հաճախ չի հասցնում ամրագրվել բառարանում: Վերջինը պայմանավորված է արտալեզվական իրողության մեջ տեղի ունեցող արագ փոփոխություններով, նորագույն տեխնոլոգիաների սրընթաց զարգացմամբ, ցանկացած լեզվի մեջ օտար բառերի ներթափանցմամբ ու դրացնից բխող հետևանքներով: Հաշվի առնելով վերոնշյալը, իսպաներեն, ինչպես և ցանկացած լեզու,

դասավանդելիս, հարկ է պատրաստել համապատասխան բառապաշար՝ ըստ տարիքային խմբի, լեզվի իմացության մակարդակի, մասնագիտության ու պահանջի: Այն է՝ առաջին հերթին ունենալ ուսանողակենտրոն մոտեցում ու նախատեսել իսպաներենի համապատասխան բառապաշար, ըստ առաջնային պահանջի՝ ընդհանուր, իրավաբանական, բժշկական, տնտեսագիտական, IT ոլորտի, բեռնափոխադրումների ոլորտի և այլն:

Հայալեզու լսարանում իսպաներենի բառապաշարի առավել արդյունավետ դասավանդման ու յուրացման համար, առաջին հերթին, հարկ է ճանաչել ու հաշվի առնել այն իրոյթները, որ գոյություն ունեն հայկական ու իսպանական մշակույթներում, որոնք խիստ ազգային լինելու պարագայում, երկու լեզվում էլ, բառային մակարդակում մնում են նույնությամբ: Այստեղ, հատկապես ազգային ուտեստների, խմիչքների և ռեալիանների պարագայում, ցանկալի ու արդյունավետ են դասավանդման դիդակտիկ մեթոդների կիրառումը, որոնք առավել հստակ պատկերացում կստեղծեն ու ավելի լավ կտպավորեն սովորած բառերը: Ինչպես օրինակ, իսպաներենում հետևյալ բառերի դեպքում՝ *tortilla*, *paella*, *tapas*, *burritos*, *siesta*, *aperitivo*, *sangria*, և այլն, առավել արդյունավետ կլինի գուրահեռ անցկացնել հայերենի հետ, համեմատելով այնպիսի ազգային բառային միջոցների հետ, ինչպիսիք են՝ գաթա, հարիսա, սպաս, մաճառ, ածիկ, սուջուխ, բաստուրմա, խորոված և այլն: Հարկ է նշել, որ հարկավոր է հատկապես բացատրել, որ, ի տարբերություն

խորովածի, որը զուտ հայկական իրույթ է ու պատրաստվում է ածուխի վրա, asado-ն և barbacoa-ն պատրաստվում են էլեկտրական սարքավորման վրա:

Առավել արդյունավետ կլինի իսպաներենի բառապաշարը ներկայացնել բառախմբերով, համապատասխան բառի հայերեն բացատրության հետ մեկտեղ, ինչպես օրինակ, մրգերը՝

Frutas

Manzana - խնձոր

Pera - տանձ

Ciruela - սալոր

Uva – խաղող

Membrillo - սերկևիլ

Higo - թուզ և այլն:

Այստեղ անհրաժեշտ է Իսպանիայում կիրառվող դասական իսպաներենի բառապաշարին զուգահեռ ներկայացնել Լատինական Ամերիկայի բառային առանձնահատկությունները, որոնք որոշ երկրներում ունեն միանգամայն այլ բառային ձև:

Melocotón - durazno - դեղձ

Albaricoque - apricote - ծիրան

Fresa - frutilla - ելակ

Բառապաշարը բառախմբերով ներկայացնելն առավել դյուրին է դարձնում ինչպես բառապաշարի դասավանդման, այնպես էլ դրա յուրացման գործընթացը, քանի որ խմբային կարգերով մտապահման գործընթացն ավելի է հեշտանում: Այստեղ անհրաժեշտ է կիրառել դիդակտիկ նյութեր: Դրա մասին խոսել են, անշուշտ, շատ մեթոդաբաններ, ինչպես օրինակ՝ Սալասար Գարսիա (1994), Գոմես Մոլինա (1997), Մուլլեր Ռունգ.(2001), Իգերաս Գարսիա (2000) և այլն:

Պատկերների ու տեսողական միջոցների կիրառումը կնպաստի բառերի առավել արագ յուրացմանը, քանի որ դրանք կօգնեն ուսանողներին մտապահել ու տեսողական հիշողության միջոցով առավել լավ հիշել բառերի իմաստային նշանակությունները: Զուգահեռաբար, հարկ է կիրառել լսողական նյութեր, որոնք անմիջապես հնչյունային ճիշտ արտաբերման ու յուրացման միջոցով կապահովեն բառապաշարի գրագետ իմացություն: Այստեղ հատկապես հայալեզու լսարանի համար կարևոր է մեծ ուշադրություն դարձնել իսպաներենի c ու z, ll ու y, ch, s տառերի հնչյունային արտաբերմանը, ինչպես նաև դրանց արտասանական առանձնահատկություններին՝ Իսպանիայում ու Լատինական Ամերիկայում:

Ցանկալի է բառերի որոշակի խմբերի հետ ներկայացնել նաև դրանց հականիշները, ինչը արդյունավետ միջոց է իսպաներենի բառապաշարի արագ ընդլայնման ու հարստացման համար: Ինչպես, օրինակ՝

Ancho - Լայն Estrecho – Նեղ

Bonito - Գեղեցիկ Feo - Տգեղ

Largo - Երկար Corto - Կարճ

Interesante - Հետաքրքիր Aburrido - Չանձրալի

Alto – Բարձր, բարձրահասակ Bajo- Կարճ, կարճահասակ

Delgado - Նիհար Gordo - Գեղ

Flaco - Վտիտ Grueso – Ճարպոտ և այլն:

Առավել հաճախ գործածվող բառերի դեպքում կարելի է նաև, հենց սկզբից, տալ դրանց հոմանիշները, ինպես օրինակ՝

Bello, hermoso, guapo, lindo, bonito – Գեղեցիկ

Cara, rostro – Դեմք

Gafas , anteojos – Ակնոց

Cabello, pelo – Մազեր

Cola, rabo - Պոչ

Acabar, terminar - Ավարտել

Cómodo, comfortable – հարմարավետ և այլն:

Իսպաներենի բառապաշարի դասավանդման համար, հայալեզու լսարանում ամենակիրառելի մեթոդներից է հաղորդակցական մեթոդը, որը հիմնվում է բանավոր ու գրավոր հաղորդակցման վրա: Վերջինը հատկապես մեծ նշանակություն ունի, քանի որ նպաստում է ուսանողների միջև արդյունավետ հաղորդակցում ապահովելուն, միևնույն ժամանակ, խոսքային առօրյա իրավիճակներում լեզվի գործնական կիրառմանը: Քերականության ու լեզվի կառուցվածքի

վրա հիմնվելու փոխարեն, նշված մեթոդը կենտրոնանում է ուսանողների սահուն ու ինքնավստահ հաղորդացման ունակությունները զարգացնելու վրա, որտեղ գլխավոր դերակատարումը վերապահված է բառապաշարին: Հաղորդակցական մեթոդի կիրառման դեպքում, բառապաշարի օգնությամբ իրականացվում են բանավեճեր, դերերով խաղեր ու երկխոսություններ, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողներին գործնականում վարժեցնել լեզվական հաղորդակցական հմտությունները որոշակի համատեքստում՝ օգտագործելով դրան հարիր բառապաշար: Այստեղ հարկ է ընդգծել, որ կարևոր է հաշվի առնել ուսանողի իսպաներենի իմացության հստակ մակարդակն ու տարիքային խումբը: Այսպես օրինակ, որոշակի բառապաշար՝ կոնկրետ հյուրանոցային թեմայի շուրջ՝

El hotel

En la recepción - Ընդունարանում

Pensión completa – Ամբողջական փաթեթ

Llave/ tarjeta llave – Բանալի / քարտ բանալի

Recepcionista – Ընդունարանի աշխատակից

Habitación individual – Մի հոգու համար նախատեսված սենյակ

Habitación doble – Երկտեղանի համար

Habitación triple – Երեք հոգու համար նախատեսված սենյակ

Habitación con terraza – Պատշգամբով սենյակ և այլն:

Ըստ լեզվի իմացության մակարդակի, համապատասխանաբար, ներկայացնել առավել բարդ բառապաշար՝ համալրված արտահայտություններով, ինչպես օրինակ՝

Tengo una habitación reservada a nombre de... - Իմ անունով սենյակ է պատվիրված

¿Dónde puedo dejar mi maleta/ equipaje? – Որտեղ կարող եմ իրերս թողնել

¿Está incluido el desayuno? – Նախաճաշը ներառված է

¿A qué hora se cierra el restaurante? – Որ ժամին է փակվում ռեստորանը

Acceso a enchufes – Վարդակների հասանելիություն

La conexión a Internet – Ինտերնետային կապ

La ausencia de ruido – Աղմուկի բացակայություն

La correspondencia entre la categoría/ estrellas y lo que se ofrece – Կարգի ու առաջարկի համապատասխանություն

El trato del personal – Անձնակազմի սպասարկում վերաբերմունք

Modificación de la reserva – Ամրագրման փոփոխում

Cancelación de la reserva – Ամրագրման չեղարկում և այլն:

Վերոհիշյալ բառերի ու արտահայտությունների յուրացումից հետո, հարկ է անմիջապես անցնել դրանց գործնական կիրառմանն ու հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Վերջինս հարկավոր է իրականացնել դասի ընթացքում գործնական կրկնությունների միջոցով՝ կրկնելով ու ամրապնդելով բառերն ու արտահայտությունները, որի միջոցով ուսանողները հեշտորեն

կիիշեն ու կմտապահեն արդեն իսկ սովորած բառերն ու արտահայտությունները: Խաղերն ու լսարանում ինտերակտիվ գործողություններն, ինչպիսիք են՝ խաչբառները, բառախաղերը, դերերով խաղերն ու երկխոսությունները, առավել բարձր լեզվական մակարդակի համար, նաև բանավեճերը, դասապրոցեսը դարձնում են առավել դյուրին, հետաքրքիր և զվարճալի: Այս փուլում ամեն ինչ իրականանում է այսպես կոչված ուղղակի մեթոդի կիրառմամբ, այն է՝ խուսափելով մայրենի լեզվի՝ հայերենի կիրառումից: Հիմնվելով կոնտեքստուալիզացիայի վրա, լսողական ու հաղորդակցական մեթոդների վրա, առանց հայերենի կիրառման, այլևս ամրապնդվում ու գործնական կիրառում են ստանում արդեն իսկ յուրացված բառերը: Վերոհիշյալը, հատկապես էական ու առանցքային է հայալեզու լսարանում, քանի որ իսպաներեն, ինչպես գիտենք, Հայաստանում քիչ դպրոցներում է դասավանդվում, ուսանողների գերակշիռ մասը սկսնակ է, ու գրեթե չկա համապատասխան միջավայր հմտությունների գործնական կիրառման համար: Սա իր հերթին ենթադրում է դասավանդողի առավելագույն ջանք՝ սովորողի ունակությունների լիարժեք զարգացման համար:

Լիարժեք արդյունք ապահովելու համար, շատ արդյունավետ է վերոնշյալ մեթոդներին ավելացնել նաև այսպես կոչված Կոլաժ մեթոդը, որը ժամանակակից նորարարական մեթոդ է ու ներկայումս կիրառվում է նաև օտար լեզուների դասավանդման մեջ: Առաջին անգամ այս մեթոդի մասին խոսել են գերմանացի մեթոդաբանները: Կոլաժի մեթոդը ուսուցմանն օժանդակող դիտողական միջոց է,

մեթոդական հնար, որը միտված է որևէ առանցքային հասկացության բառային հատվածի հարստացմանը: Այստեղ հարկ է նշել, որ նորագույն տեխնոլոգիաներն ու ժամանակակից տեղեկատվական ոլորտն էականորեն նպաստում են այս մեթոդի հնարավորությունների զարգացմանը: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ վերոնշյալ մեթոդներին ավելացնելով կոլլաժ մեթոդը, կարելի է առավել պատկերավոր ու տպավորիչ դարձնել՝ հասկացական կարգերով ու հարակից բառերով, բառապաշարի յուրացումը, ինչը տալիս է առավելագույն արդյունք:

Վերոնշյալն, անշուշտ, չի հավակնում վերջնական տեսակետ լինելու, քանի որ նորագույն տեխնոլոգիաները ստեղծում են առավել լայն ու անսպառ հնարավորություններ, ու հավանական է, որ մոտ ապագայում կստեղծվեն առավել նոր տեխնոլոգիաներ, որոնք էլ ավելի կնպաստեն բառապաշարի արագ յուրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Barrigüete, C.M.(2008). La enseñanza-aprendizaje del vocabulario en ELE con el Método collage.
2. García, M.(2017). La enseñanza del español como lengua extranjera: reflexiones y desafíos. *Revistade Lenguas para Fines Específicos*, 23(2), pp. 7-24.
3. Gómez Molina, J.R. (1997). El léxico y su didáctica: una propuesta metodológica. *REALE*, 7, pp.69-94.

4. Higuera García, M. (2000). Favorecer el aprendizaje del léxico. Boletín de ASELE, 23, pp, 13-18.
5. Martínez, A.(2014). Métodos y enfoques en la enseñanza del español como lengua extranjera.
6. Möller, R.(2001). Siglo XXI: ¿Innovamos? La enseñanza de una segunda lengua extranjera.
7. Peris Martín, E. (2000). La enseñanza centrada en el alumno. Algo más que una propuesta políticamente correcta. Frecuencia-L, 13, pp. 3-30.
8. Salazar García,V. (1994). Aprendizaje del léxico en un currículo centrado en el alumno. Didáctica del español como lengua extranjera 2, pp. 165- 203.
9. Рыжкина, И. Б.(2009). Коллаж как средство и способ организации межкультурного диалога. Русский язык и межкультурная коммуникация, 8(1), сс.24-28.